

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026թթ

ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2021թ. դեկտեմբերի 29-ի N 54-Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ Դ. ՂՈՒԼՈՒՆՑ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	8
2.4. Համայնքի ֆինանսական վիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	9
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	11
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	11
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	13
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	13
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	13
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	30
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	36
6. 2022-2026թթ Տեղ համայնքում պլանավորված և կատարվելիք ծրագրերի ցանկ	37
Հավելված 1. Ծրագրերի անձնագրեր	39
Հավելված 2. Ծրագրի մոնիթորինգ	65
Հավելված 3. Ծրագրի ֆինանսավորման ամփոփում.....	65

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Տեղ համայնքի հարգելի բնակիչներ,

Խոշորացված Տեղ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի կայուն և դինամիկ աճն ապահովող, համակարգված, բազմակողմանի, մանրամասն հանրային քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված նպատակային և ճշգրիտ քայլերի ամբողջությունն է, որը միտված է լինելու միմիայն բարելավելու համայնքի սոցիալ-տնտեսական կյանքը, ճկուն և պարբերաբար թարմացվող ծրագրերի կատարման արդյունքում բարձրացնելով ժողովրդի կենսամակարդակը: Համայնքային ծառայություններն իրենց բնույթով բազմապիսի են, ուստի դրանց կատարմանը որակական փոփոխություն տալու, կատարողական կարգապահությունը ամենաբարձր մակարդակի պահելու համար անհրաժեշտ է մշակել հետևողական և վերահսկման մեխանիզմներ՝ բազմապատկելով բոլորիս ջանքերն ու եռանդը:

Քանի որ համայնքը 2020թ. 44-օրյա պատերազմից հետո դարձել է սահմանամերձ ուստի էլ ավելի եմ կարևորում բոլորիդ կողմից մասնակցային գործընթացը անվտանգության ապահովման և համայնքային ծրագրերի կատարման գործում:

Համայնքի առջև ծառացած խնդիրները, մարտահրավերները և նախկիններից ժառանգաբար փոխանցված խորքային խնդիրներն են հիմք հանդիսացել 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրի մշակման համար: Ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով առկա հնարավորությունների և վեր հանված խնդիրների առաջնահերթությունները, որը պետք է հիմք հանդիսանա տարեկան աշխատանքային պլանների և բյուջեի մշակման ու կատարման աշխատանքները կազմակերպելիս: Այն պետք է լինի հնարավորինս ճկուն և պարբերաբար թարմացվող, որը կապահովի եկամուտների լրացուցիչ աղբյուրների հավաքագրում, ֆինանսական միջոցների հայթայթում, համայնքային եկամուտների և տուրքերի արդյունավետ հավաքագրում և նպատակային օգտագործման կազմակերպում: Համայնքի կայուն զարգացումը և խորքային խնդիրների լուծումը հնարավոր է միայն համատեղ ուժերով՝ համախմբելով համայնքի, պետության, միջազգային ծրագրերի, կազմակերպությունների հնարավորությունները:


Հարգելի բնակիչներ, միմիայն բոլորիս կողմից սրտացավ աշխատանքի և համառ մոտեցման շնորհիվ է լինելու այս ծրագրերի կյանքի կոչումը և մեր համայնքի ծաղկեցումը: Համոզված եմ՝ «մեկը բոլորի և բոլորը մեկի» սկզբունքով, միասնական ջանքերով այս հինգ տարիների ընթացքում շենացնելու ենք մեր համայնքը և մեր հաջողությունն ապահովված է լինելու:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն


2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Տեղ խոշորացված համայնքը ձևավորվել է 2016թ-ի սեպտեմբերին: Համայնքի մեջ ընդգրկված են 7 բնակավայրեր: Համայնքի կենտրոնը Տեղ բնակավայրն է: 2019թ տարեկան ամփոփումների արդյունքում Տեղը ճանաչվել է որպես «լավագույն բարեկարգ համայնք»: Ստորև ներկայացված աղյուսակներն ու դիագրամները արտահայտում են համայնքի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր բնակավայրին վերաբերող ընդհանուր ժողովրդագրական տվյալներ, հողերի չափեր և հեռավորությունը Գորիս քաղաքից:

Բնակավայրի անվանումը	Համայնքային հողերը	Ընդհանուր բնակիչների թիվը	Հեռավորությունը Գորիսից
Արավուս	443 հա	180	22 կմ
Խնածախ	3237 հա	758	31 կմ
Խոզնավար	2121 հա	300	45 կմ
Կոռնիձոր	2417 հա	1053	25 կմ
Վաղատուր	2275 հա	408	37 կմ
Տեղ	3867 հա	2189	20 կմ
Քարաշեն	1370 հա	531	16 կմ
Ընդհանուր	15730 հա	5419	-



Համայնքի տարիքային կազմը



2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2021թ.-ի դրությամբ կազմում է 238,021,800 ՀՀ դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 27,4%, որը հիմնականում ձևավորվում է բնակավայրերի հողային և գույքային հարկերից:

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները

Բնակավայր	Արտադրանք	Ծավալը (տարեկան)
Արավուս	Ցորեն	4830g
	Գարի	1040g
	Հաճար	500g
Խնածախ	Ցորեն	3300g
	Գարի	2765g
	Հաճար	2250g
	Լոբի	80g
Խոզնավար	Ցորեն	750g
	Եգիպտացորեն	750g
	Լոբի	80g
Կոռնիձոր	Ցորեն	26250g
	Գարի	6760g
	Հաճար	1375g
	Լոբի	170g
	Լոլիկ	719g
	Վարունգ	318g
	Սոխ	946g

	Մխտոր	342g
	Կարտոֆիլ	4966g
Վաղատուր	Կարտոֆիլ	4011g
	Լոբի	80g
Տեղ	Ցորեն	40410g
	Գարի	10250g
	Հաճար	2225g
	Լոբի	150g
	Լոլիկ	822g
	Վարունգ	367g
	Սոխ	172g
	Մխտոր	940g
	Կարտոֆիլ	8404g
Քարաշեն	Ցորեն	10500g
	Գարի	2185g
	Հաճար	1875g
	Մխտոր	428g

Ծառայության ոլորտի ձեռնարկություններ

Բնակավայր	Ձեռնարկություն	Աշխատակիցների քանակը
Տեղ	Խանութ	1
	Խանութ	3
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	2
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Դեղատուն	1
	Այրադաց	2
	Լավաշի թոնիր	4
	Տաքսի ծառայություն	5
	Տաքսի ծառայություն	4
	Տաքսի ծառայություն	4
	Գազալցակայան	8
	Հացի փուռ	2
	Բենզալցակայան	2
	Բենզալցակայան	2
Քարաշեն	Խանութ	1
	Կաթի վերամշակման գործ.	4

	Կաթի վերամշակման գործ.	5
	Գազալցակայան	8
Վաղատուր	Կաթի վերամշակման գործ.	2
	Խանութ	1
Խոզնավար	Խանութ	1
Խնածախ	Հացի փուռ	1
	Կաթի վերամշակման գործ.	3
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
Կոռնիձոր	Կաթի վերամշակման գործ.	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1

Կրթական հաստատություններ

Անվանում	Նախատեսված է _____ հոգու համար	Ընդգրկված է _____ հոգի
Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց	320	205
Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց	320	139
Քարաշենի միջնակարգ դպրոց	112	73
Կոռնիձորի միջնակարգ դպրոց	220	128
Վաղատուրի միջնակարգ դպրոց	180	41
Խոզնավարի միջնակարգ դպրոց	120	39
Արավուսի տարրական դպրոց	120	7
Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն	120	45
Կոռնիձորի նախադպրոցական հաստատություն	30	31
Տեղի արտադպրոցական պարի խմբակ	-	37

Առողջապահական հիմնարկներ

Բնակավայր	Տեսակ	Քանի հոգու համար է նախատեսված	Տարեկան այցելուների թիվը
Տեղ	Առողջության առաջնային պահպանման կենտրոն	15	8640

Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր, Քարաշեն	Բուժկետ	-	-
---	---------	---	---

Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բանական, պատմական և մշակութային հուշարձաններ

Բնակավայր	Անվանում
Տեղ	Սուրբ Գևորգ Եկեղեցի, որը կառուցվել է վաղ միջնադարում:
	Մելիք Բարխուդարի նստավայրը, որը կառուցվել է 18րդ դարերում
Քարաշեն	Գյուղի արևմուտքում գտնվող «Հին Գյուղ» քարանձավային բնակավայրը իր մատուտով և «Սուրբ Զուր» կոչվող աղբյուրով
Խնածախ	«Մելիքների թաղամասը»
Կոռնիձոր	«Սըռնեղցի» կոչվող եկեղեցին

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Արավուս	Խնածախ	Խոզնավար	Կոռնիձոր	Վաղատուր	Տեղ	Քարաշեն
12	13	8	37	52	78	15

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության զարգացման գործակալության օգնությամբ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի, ինչպես նաև տարբեր սուբվենցիոն ծրագրերի միջոցով Տեղ խոշորացված համայնքում 2021թ-ին իրականացվել է մոտ 79,306,970 դրամի չափով ներդրում: Համայնքապետարանի ներկայացրած հայտի հիման վրա նախատեսված միջոցները ծախսվել են հետևյալ նպատակներով՝

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը	Համայնքի համաներդրման չափը
1.	Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի 1-ին հարկի մասնակի վերանորոգում	9,579,000 ՀՀ դրամ	957,900 ՀՀ դրամ
2.	Խոզնավար բնակավայրի վարչական շենքի 1-ին հարկի մասնակի	11,749,500 ՀՀ դրամ	2,000,000 ՀՀ դրամ

	վերանորոգում		
3.	Կոռնիձոր բնակավայրի խաղահրապարակի սարքավորումների մատակարարում և տեղադրում	3,000,000 ՀՀ դրամ	—
4.	Տեղ համայնքի Խնածախ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ	24,899,790 ՀՀ դրամ	—
5.	Տեղ համայնքի Խոզնավար բնակավայրի ոռոգման ներքին ցանցի կառուցման աշխատանքներ	6,578,500 ՀՀ դրամ	—
6.	Տեղ համայնքի Վաղատուր բնակավայրի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգում	10,848,000 ՀՀ դրամ	—
7.	Տեղ համայնքի Տեղ բնակավայրի «Օհանի արխաջ», «Խնդակ» և «Սրնեղծի» արոտավայրերում ջրագիծ-ջրելատեղի կառուցում	12,651,980 ՀՀ դրամ	2,211,026 ՀՀ դրամ

2.4. Համայնքի ֆինանսական վիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Տեղ բազմաբնակավայր համայնքի եկամուտների զգալի մասը (շուրջ 73%) ձևավորվում է պետական բյուջեից համայնքին տրամադրվող ամենամյա դոտացիաներից: Ուստի համայնքի եկամուտների փոփոխությունը մեծապես պայմանավորված է նշված դոտացիայի չափից: Հաշվի առնելով Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները Հայաստանի տնտեսական աճի վերաբերյալ (ՀՆԱ-ի աճը՝ 3,4% 2019թ.-ին և 4,8% 2021թ.-ին)¹ակնկալվում է, որ պետական մակարդակով շոշափելի փոփոխություններ տեղի չեն ունենա դոտացիայի ավելացման առումով:

Մյուս կողմից եկամուտները կարող են փոխվել, եթե համայնքում գանձվել հարկերի չափն ավելանա: Քանի որ ծրագիրը ներառում է գույքի և հողային հարկերի գանձման

¹International Monetary Fund. 2022. World Economic Outlook. *World Economic and Financial Surveys*. Retrieved from: <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2022/02/pdf/text.pdf>.

արդյուտավետության բարձրացման ռազմավարություն, ակնկալվում է, որ դրա շնորհիվ մոտակա հինգ տարիների ընթացքում համայնքի եկամուտները որոշակիորեն կավելանան: Սույն կանխատեսումը մանրամասնորեն ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Եկամուտներ	2021 Վիս տ.	2022 Նա խ.	2023 կան խ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 Կանխ.
Ընդհանուր եկամուտների չափը	227,570,300	238,021,700	249,446,740	261,420,180	273,968,350	287,118,830
Ընդամենը սեփական եկամուտներ	65,244,800	68,376,550	71,658,620	75,098,240	78,702,950	82,480,690
Գույքահարկ կազմակերպություններից	49,000					
Գույքահարկ քաղաքացիներից	19,652,400					
Ընդամենը հողի հարկ	25,224,100					
Հողի հարկ համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակությ. հողերց	25,224,100					
Բ Հողի հարկ համայնքի տարածքում գտնվող ոչ գյուղատնտեսական նշանակությ. հողերց	7,782,100					
ընդամենը հողի վարձակալություն	7,782,100					
Հողի վարձավճար համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակությ. հողերց	7,490,800					
Հողի վարձավճար համայնքի տարածքում գտնվող կառուցապատման նպատ. տրված հողերց	360,000					
Դոտացիա	162,325,500	164,124,500	—	—	—	—
դրամաշնորհներ	498,100	—	—	—	—	—
Այլ դոտացիա	0	—	—	—	—	—
Տեղական տուրքեր	404,000	—	—	—	—	—
Այլ եկամուտներ	11,783,600	—	—	—	—	—

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի զարգացման հիմնական դժվարություններից մեկն է հանդիսանում տրանսպորտային ցանցի բացակայությունը: Այն խոչընդոտ է հանդիսանում հետևալ խնդիրների լուծման համար՝

- Համայնքի գյուղատնտեսների հասանելիությունը անհրաժեշտ սպառման շուկաներին,
- Համայնքի արտադրողական կրթական հաստատությունների համար անհրաժեշտ մասնագետների երթևեկությունը Գորիս քաղաքից,
- Համայնքի բնակիչների՝ Տեղ բնակավայրում և Գորիս քաղաքում գտնվող բուժհաստատությունից օգտվելը,

Գյուղատնտեսական ձեռներեցության զարգացման հիմնական դժվարություններից է հանդիսանում ոռոգման ջրի բացակայությունը Տեղ, Խնածախ և Քարաշեն բնակավայրերում: Զրի առկայությունը հնարավորություն կտար զարգացնելու բանջարաբուստանային կուլտուրաներն այս բնակավայրերում:

Համայնքն ունի նաև կառուցապատման հետ կապված խնդիրներ, որոնք առաջացել են հատակագծի բացակայության և ոչ կանոնակարգված շինարարական աշխատանքների պատճառով: Բացառությամբ Կոռնիձորի և Քարաշենի՝ մնացած հինգ բնակավայրերում շինությունները տեղակայված են ոչ օրինաչափ կերպով, որը դժվարացնում է միջբնակավայրային ճանապարհների վերանորոգումը և դրանց լուսավորումը մատչելի եղանակով: Հատակագծի և համապատասխան շինարարական դրույթների բացակայությունը նաև պատճառ է դարձել գերեզմանատների անկանոն կառուցման համար:

Համայնքը նաև ունի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման խնդիր: Կան բրդի և ծղոտի մեծ պաշարներ, որոնք ուղղակի այրվում կամ դեն են նետվում, քանի որ գյուղատնտեսները դրանք չեն կարողանում վերամշակել կամ վաճառել:

Իրացման խնդիրներից մեկն էլ այն է, որ գյուղատնտեսական արտադրանքը շատ հաճախ վաճառվում է գյուղացիների համար ոչ շահավետ գներով: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում դիվերսիֆիկացիայի բացակայությամբ: Քանի որ համայնքի բնակիչները հիմնականում զբաղված են ընդամենը մի քանի գյուղատնտեսական ապրանքի լայնածավալ արտադրությամբ, նրանք ստեղծում են իրենց հասանելի շուկայական պահանջարկին գերազանցող առաջարկ: Արդյունքում գյուղատնտեսության ոլորտի ձեռներեցները ստիպված են լինում իրենց արտադրանքը վաճառել նախատեսվածից ցածր գնով, որն էլ իր հերթին տալիս է ներդրված ներուժին ոչ համաչափ եկամուտ:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
--------------	--------------

• Անասնապահության և բանջարաբուստարանային կուլտուրաների արտադրության ծավալների մեծացման զգալի ներուժ • Քարաշեն և Կոռնիդոբր բնակավայրերի տնային տնտեսությունների կանոնավոր տեղաբաշխվածությունը,² • Խոզնավար և Վաղատուր գյուղերում առատ ջրային ռեսուրսների առկայություն, • Ընդարձակ արոտավայրերի առկայություն • Կոռնիձոր, Քարաշեն և Տեղ բնակավայրերում զգալի թվով բերրի վարելահողերի առկայություն, • Ծղոտի պաշարների առկայություն	• Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր և այլն) ոչ բարվոք վիճակը, • Համայնքի բնակավայրերի տրանսպորտային համակարգի անբավարար վիճակը, • Գյուղատնտեսական ապրանքի համար անհրաժեշտ շուկաների հետ թույլ կապը • Ծղոտից վառելանյութ ստանալու տեխնիկայի բացակայություն:
Հնարավորություններ	Սպառնալիքներ
• Համայնքի տեղակայված լինելը Հայաստանն Արցախի հետ կապող միջպետական ճանապարհի վրա, • Ակնկալվում է դիզվառելիքի գնի աճ:	• Բնական տարերային աղետների հնարավոր պատճառածված սպառնալիքներ (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում), • Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում, • Համայնքին հարակից ազատագրված տարածքների կարգավիճակի փոփոխությունը, որոնք համայնքի անասնապահների համար օգտագործվում էին, որպես արոտավայրեր, • Մատչելի գնով գյուղատնտեսական ապրանքների ներկրումն արտերկրից:

²Այս հանգամանքն ավելի դյուրին է դարձնում համայնքներում աղբահանության իրականացումը և հնարավորություն է տալիս համեմատաբար մատչելի եղանակով լուծել լուսավորության և կոյուղու խնդիրը

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Տեղ բազմաբանակվայր համայնքը միտված է իր բնակիչների համար ապահովում է սոցիալ-տնտեսական կայուն զարգացում: Այն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության բնագավառում զարգացման ներուժ, որը համայնքը նպատակ ունի յուրացնել սույն ծրագրի շրջանականերում: Մոտակա հինգ տարիների ընթացքում համայնքը հավակնում է շոշափելի փոփոխությունների հասնել իր բնակչության բարեկեցության բարձրացման հարցում:

Վերոնշյալ տեսլականին հասնելու համար սույն ծրագրի շրջանակներում համայնքը սահմանել է հետևյալ թիրախները՝

- Համայնքի կազմի մեջ մտնող յոթ բնակավայրեր համաչափ զարգացումը,
- Ձեռներեցության զարգացում՝ օգտագործելով բնակավայրերի գյուղատնտեսական ներուժը,
- Համայնքում աշխատատեղերի ընդլայնում,
- Համայնքի պատմա-մշակութային օբյեկտների զբոսաշրջային վայրերի վերածում,
- Մաքուր շրջակա միջավայրով համայնք,
- Բարեկարգված ենթակառուցվածքային համակարգեր,
- Բարձր նախադպրոցական կրթության մակարդակ,
- Համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնություններում առաջընթաց,
- Սերտ համագործակցություն համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ,
- Պատշաճ առողջապահական ծառայություններ մատուցում:

Համայնքի ընդհանուր զարգացումը գնահատելու համար սահմանվել են ներքոնշյալ չափանիշները յոթ բնակավայրերից յուրաքանչյուրում՝

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը բնակավայրերի ընտանիքների ընդհանուր թվին,
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,
- Համայնքի բնակավայրերում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով):

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Ստորև բերված անմիջական նպատակները հիմնված են համայնքի տեսլականի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր խնդիրների հիման վրա: Այս բաժնում հստակեցված է նպատակների չափման ցուցանիշները և դրանց թիրախային արժեքները, առնչվող խնդիրները, նախատեսվող միջոցառումները և դրանց միջանկյալ արդյունքները: Այս ծրագրերն ավելի մանրամասն ներկայացված են Հավելված 1-ում:

1. Բազմակետոր գյուղատնտեսության զարգացում

Առնչվող	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության
---------	---

խնդիր(ներ)	խթանում, Գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Կանաչ ոլորի և հնդկաձավարի արտադրության ծավալների աճ Կոռնիձոր և Տեղ բնակավայրերում: • Գյուղատնտեսների շրջանում կանաչ ոլորի և հնդկաձավարի աճեցման բնագավառում անվճար խորհրդատվության տրամադրում, • Գյուղատնտեսներին կանաչ ոլորի և հնդկաձավարի սերմերի տրամադրում, • Կանաչ ոլորի և հնդկաձավարի աճեցման խրախուսում: Քարաշեն և Տեղ բնակավայրերում սոխի և սխտորի արտադրության ծավալների ընդլայնում: • Սոխի և սխտորի աճեցման ծավալների մեծացման համար ոռոգելի ցանքատարածությունների հատկացում, • Սոխի և սխտորի աճեցման համար անհրաժեշտ սերմերի տրամադրում: Օրգանական ծնեբեկի և աշորայի արտադրման ծավալների աճ Տեղ բնակավայրում: • Գյուղացիների շրջանում օրգանական ծնեբեկի և աշորայի աճեցման վերաբերյալ անվճար խորհրդատվության տրամադրում, • Օրգանական ծնեբեկի և աշորայի աճեցման համար անհրաժեշտ ցանքատարածությունների տրամադրում, Ջերմոցային տնտեսությունների առկայություն Տեղ և Խոզնավար բնակավայրերում: • Ջերմոցային տնտեսությունների հիմնադրման համար անհրաժեշտ համաֆինանսավորման հայթայթում, • Շահագրգիռ գյուղացիներին ջերմոցային տնտեսության վարման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, Վաղատուր համայնքում պտղատու այգիների քանակի աճ: • Բնակչության շրջանում պտղատու այգեգործության խրախուսում, • Պտղատու տնկիների տրամադրում, Ծառերի կպչողականությունն ապահովելու համար անհրաժեշտ պարագաների տրամադրում:
Զափման ցուցանիշ(ներ)	• Բերքատվության չափը, • Գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտների թիվը, • Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամուտների չափը, • Մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական

	նշանակության հոդերին:
Թիրախային արժեք(ներ)	• Բերքատվության և գյուղատնտեսական ապրանքների սպառման տարեկան աճ առնվազն 10%-ով, • Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամուտների տարեկան աճ առնվազն 10%-ով, • Մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժնի աճ առնվազն տարեկան 10%-ով:

2. Համայնքի բնակավայրերում նախակրթական և ուսուցման իրականացում

Առնչվող խնդիր(ներ)	Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Առանձնացված նախադպրոցական հաստատությունների առկայությունը համայնքի բոլոր բնակավայրերում: • Բոլոր բնակավայրերում նախադպրոցական հաստատությունների համար անհրաժեշտ վայրերի տրամադրում, • Առանձնացված շինություններում անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների իրականացում: Բոլոր բնակավայրերի նախադպրոցական հաստատություններում անհրաժեշտ գույքի առկայություն: • Գույք ձեռք բերելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթում, • Պոտենցիալ բարերարների հետ բանակցությունների վարում: Ջեռուցվող նախակրթական հաստատություններ: • Նախակրթական հաստատությունների համար գրանուլային վառարանների ձեռքբերում:³ Բարելավված ճաշացանկ բոլոր նախակրթական հաստատությունների համար: • Ճաշացանկի բարելավման համար խորհրդատվությունների անցկացում համապատասխան մասնագետների հետ, Նախակրթական հաստատությունների համար նոր ճաշացանկի կազմում:
Զափման ցուցանիշ(ներ)	• Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին • Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական

³Բարերի օգնությամբ Տեղ համայնքը մտադիր է գնել ծղոտից վառելանյութ ստանալու գրանուլացնող սարքավորում, որը գյուղացիները որոշ գույքի դիմաց կարող են իրենց ծղոտի պաշարները վերածել վառելիքի: Հանգանակված գույքով նախակրթական հաստատությունների համար կգնվեն գրանուլային վառարաններ, և նրանց ջեռուցումը կիրականացվի ծղոտից ստացված վառելանյութով:

	կրթությունից
Թիրախային արժեք(ներ)	- Նախադպրոցական հաստատություններում ընդգրված երեխաների չափաբաժնի ավելացում առնվազն մինչև 80% մինչև 2022թ.-ի ավարտը: - Ծնողների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում),

3. Համայնքի համար տրանսպորտային համակարգի ստեղծում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Օրական երկու անգամ երթևեկության իրականացում համայնքի բնակավայրերից դեպի Գորիս և հակառակ ուղղությամբ, - Մարդատար տրանսպորտային միջոցի ձեռքբերում, - Երթևեկող ուսուցիչներին հատկացվող դրամական միջոցների տրամադրումը երթևեկությունն իրականացնող կազմակերպությանը կամ անհատին:⁴ Անհրաժեշտ ճանապարհային նշանների և կանգառների առկայություն: - Կոռնիձոր բնակավայրը Երևան-Ստեփանակերտ մայրուղուն կապող ճանապարհի ելակետում ճանապարհային նշանի տեղադրում, - Բնակավայրերից յուրաքանչյուրում առնվազն մեկ կանգառի կառուցում Տեղ վարչական համայնքի մուտքի և ելքի ցուցանակների տեղադրում:
Զափման ցուցանիշ(ներ)	- Համայնքի բանկիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից - Առկա ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշանների թվին, - Առկա կանգառների թվի հարաբերությունն անհրաժեշտ կանգառների թվին
Թիրախային արժեք(ներ)	Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում),

⁴Այս միջոցառման հիմնական նպատակն է երթևեկությունը շահավետ դարձնել այն իրականացնող կազմակերպության կամ անհատի համար: Նախկինում տրանսպորտային ցանց հիմնելու փորձերը ձախողվել են ուղևորների սակավ թվի պատճառով: Այս փոփոխությունը երթևեկության համար կապահովի ուղևորների կայուն քանակ՝ հաշվի առնելով, որ համայնքում աշխատում է ավելի քան 35 երթևեկող ուսուցիչ:

	• Բոլոր անհրաժեշտ ճանապարհային նշանների կառուցում և վերանորոգում: • Բոլոր անհրաժեշտ կանգառների կառուցում:
--	--

4. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում, կանաչապատում, սանիտարական մաքրում, աղբահանության իրականացում և գերեզմանատների և առնչվող խնդիրների կարգավորում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապավովումը
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքի բոլոր բնակավայրերի համար հատակագծի առկայություն, • Համապատասխան մասնագետների հետ դաշտային վերլուծությունների իրականացում, • Համայնքի բնակավայրերի տարբեր հատվածների կարգավիճակների և սահմանների հստակեցում, • Հատակագծերի կազմում Համայնքի քաղաքաշինության կանոնադրության առկայություն: • Կանոնադրության մշակման համար խորհրդակցությունների անցկացում համապատասխան մասնագետների մասնակցությամբ • Քաղաքաշինության ժամկետների, պարտադիր դրույթների և տուգանքների չափերի սահմանում, • Կանոնադրության կազմում Համայնքի շինարարական աշխատանքների համապատասխանությունը նոր կազմված կանոնադրության և բնակավայրերի համար ստեղծված հատակագծերի, • Կանոնադրության և հատակագծի մասին բնակչությանը տեղեկատվության տրամադրում, • Խիստ վերահսկողության մեխանիզմների ստեղծում, • Պարբերաբար ստուգումների իրականացում Բարակգրված կանաչապատ հասարակական վայրերի չափաբաժնի աճ համայնքի բնակավայրերում, • Համայնքի կանաչապատ հասարակական վայրերը աղբից մաքրում, • Համայնքի կողմից կազմակերպված շաբաթօրյակների ընթացքում կանաչապատ հասարակական վայրերի բերակազրում, • Ծառատունկերի իրականացում • Հասարակական վայրերի պահպանման մասին ցուցանակների տեղադրում Առնվազն շաբաթական մեկ անգամ աղբահանության

	իրականացում համայնքի բոլոր բնակավայրերում, • Աղբամանների ձեռքբերում, • Համայնքի բնակիչներին աղբահանության գրաֆիկի մասին տեղեկատվության տրամադրում Համայնքի բնակավայրերում առկա աղբի չափաբաժնի նվազում, • Համայնքի բնակավայրերը աղբից մաքրելու համար ֆինանսական միջոցների հայթայթում, • Լայնածավալ աղբահանության իրականացում, • Աղբի տեղափոխության վերաբերյալ պայմանագրի կնքում Գերեզմանատների կառուցումը համաձայն հատակագծի և կանոնադրության իրականացում • Գերեզմանատների կառուցմանը վերաբերող պարտադիր դրույթների մասին բնակչությանը տեղեկատվության տրամադրում, • Խիստ վերահսկողության մեխանիզմների ստեղծում, Պարբերաբար ստուգումների իրականացում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն, • Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով, • Համայնքում քաղաքաշինության կանոնադրության առկայություն, • Համայնքի հասարակական վայրերի բարեկարգված կանաչապատ տարածքների չափի հարաբերությունը ընդհանուր կանաչապատ հասարակական վայրերի չափին աճ՝ արտահայտված տոկոսով, • Բնակիչների բավարարվածության մակարդակը իրականացվող աղբահանությունից • Համայնքի բնակավայրերում առկա աղբի չափաբաժինը • Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին
Թիրախային արժեք(ներ)	• Մինչև 2022թ.-ի ավարտը համայնքի բնակավայրերի հատակագծերի ստեղծում և քաղաքաշինության կանոնադրության ստեղծում, • Սկսած 2024թ.-ից բոլոր շինարարական աշխատանքների առնվազն 80%-ի իրականացում համաձայն համայնքի հատակագծի, քաղաքաշինության կանոնադրության և կառուցապատման թույլտվության դրույթների, • Սկսած 2025թ.-ից բոլոր նոր գերեզմանատների կառուցումը համաձայն համայնքի հատակագծի և քաղաքաշինության կանոնադրության, • Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ

	համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվող աղբահանությունից (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում), • Մինչև 2022թ.-ը համայնքի բնակավայրերում առկա աղբի առնվազն 95%-ի դուրսբերում» • Բարեկարգված կանաչապատ հասարակական վայրերի չափաբաժնի աճ առնվազն 45%-ով մինչև 2026թ.-ը համայնքի բնակավայրերից յուրաքանչյուրում:
--	---

5. Զբոսաշրջության խթանում

Առնչվող խնդիր(ներ)	Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող բնակավայրերում զբոսաշրջության զարգացման խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքի պատմամշակութային վայրերի մասին մանրամասն տեղեկության առկայություն համացանցում: • Նշված վայրերի մասին տեղեկատվության հավաքագրում, • Հավաքված տեղեկության տեղադրում Wikipedia կայքում, կառավարության պաշտոնական կայքի համապատասխան բաժնում Համայնքի պատմամշակութային վայրերի մասին պատմող բուկլետների տպագրություն և տարածում • Համապատասխան հյուրանոցների և զբոսաշրջային գործակալությունների հետ պայմանագրերի կնքում: Պատմամշակութային վայրերի ավելի բարեկարգված վիճակ Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնտեսությունների թվի աճ • Մելիք Բարխուդարի կացարանի հիմնովին վերանորոգում, • Պատմամշակութային վայրերի մոտ տեղեկատվական ցուցանակների տեղադրում:
Զափման ցուցանիշ(ներ)	• Համայնք այցելած զբոսաշրջիկների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատությամբ, • Զբոսաշրջային եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ նախորդ տարվա համեմատությամբ:
Թիրախային արժեք(ներ)	• Զբոսաշրջիկների թվաքանակի տարեկա առնվազն 15% աճ, • Մինչև 2026թ.-ն առնվազն 5 զբոսաշրջային եկամուտ ստացող տնտեսությունների հիմնում:

6. Անասնապահության ոլորտում բարեփոխումների իրականացում

Առնչվող խնդիր(ներ)	Գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում, Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում:
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Արհեստականորեն սերմնավորվող կենդանիների չափաբաժնի ավելացում ⁵ - Արհեստական սերմնավորման դրական կողմերի մասին համայնքի անասնապահներին տեղեկության տրամադրում, - Լայնածավալ արհեստական սերմնավորման գրաֆիկի ստեղծում Համայնքի արոտների գերաբաժեցման ծավալների նվազում - Համայնքի վարչական տարածքում կենդանիների համակարգված շարժի ապահովում: Արավուս բնակավայրին հարակից արոտներում անհրաժեշտ խմոցների առկայություն - Խմոցների կառուցման համար անհրաժեշտ չափումների կատարում, - Շինարարական աշխատանքների իրականացում
Զափման ցուցանիշ(ներ)	- Արհեստականորեն սերմնավորվող անասունների թվի հարաբերությունը ընդհանուր անասունների թվին, - Համայնքի գերաբաժեցված արոտների չափի հարաբերությունը նախորդ տարվա գերաբաժեցված արոտների չափին, - Անհրաժեշտ խմոցների առկայություն,
Թիրախային արժեք(ներ)	- Արհեստականորեն սերմնավորվող անասունների չափաբաժնի աճ տարեկան առնվազն 15%-ով, - Գերաբաժեցված արոտների չափաբաժնի նվազում տարեկան առնվազն 20%-ով, - Համայնքի արոտավայրերի ամբողջական ջրաբեկացում:

7. Համայնքի ճանապարհների բարեկարգում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում:
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Խոզնավար և Վաղատուր բնակավայրերը Գորիս քաղաքին կապող միջհամայնքային ճանապարհի բարեկարգված վիճակ: - Ճանապարհի վերանորոգման համար ֆինանսական միջոցների հայթայթում, - Շինարարական աշխատանքների իրականացում

⁵Հարկ է նշել, որ արհեստական սերմնավորման ծավալների մեծացումը կնպաստի կենդանիներից մարդուն փոխանցվող (զուոտիկ) վարակիչ հիվանդությունների չափի նվազմանը:

	Խնածախի կամրջի վերանորոգված լինելը • Նախնական չափումների կատարում, • Կամրջի վերանորոգում, • Ջրահեռացման համակարգի ստեղծում
Չափման ցուցանիշ(ներ)	Բնակիչների բավարարվածության մակարդակը ճանապարհների վիճակից:
Թիրախային արժեք(ներ)	Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում),

8. Համայնքի բնակավայրերում լուսավորության ցանցի ստեղծում և բարելավում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն: Համայնքի բնակավայրերի կառուցապատումը և բարեկարգումը:
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	• Առկա լուսատուներում էլեկտրախնայող լամպերի փոխարինում, • Համայնքի բնակավայրերի լուսավորության համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթում, • Բոլոր յոթ բնակավայրերում լուսավորության 100% ապահովում
Չափման ցուցանիշ(ներ)	Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող կենտրոնական հատվածների չափաբաժինը:
Թիրախային արժեք(ներ)	Բոլոր յոթ բնակավայրերի հիմնական թաղամասերի ամբողջական լուսավորումը էլեկտախնայող լամպերով մինչև 2023թ-ը:

9. Ոռոգման և խմելու ջրի ցանցերի կառուցում և բարենորոգում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապավովումը
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Խնածախ բնակավայրում խմելու ջրի առկայություն • 8,5կմ երկարությամբ խմելու ջրի ջրագծի կառուցում • Ներքին ջրային ցանցի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթում, • Ներքին ջրային ցանցի աստիճանաբար կառուցում: Վաղատուր բնակավայրում խմելու ջրի համաչափ մատակարարում • Ջրային ցանցի վերանորոգում և նոր փականների

	տեղադրում, • Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում: Տեղ և Կոռնիձոր բնակավայրի ոռոգման ջրի պաշարների կորստի նվազեցում • Ոռոգման ջրի ջրատարների վերանորոգում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Համայնքի բնակիչների բավարարվածությունը խմելու ջրի մատակարարումից, • Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից:
Թիրախային արժեք(ներ)	• Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում) խմելու և ոռոգման ջրերի մատակարարումից:

10. Գույքային և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Հարկերի պատշաճ գանձում • Գույքի և հողի հարկերի գանձման հետևողական վերահսկողության իրականացում, Համայնքապետարանի գույքի հետ գործարքների համապատասխանությունը «գույքի կառավարման ծրագրին»: • Գույքի նոր գնահատման իրականացում, • Գույքի հետ կապված գործարքների վերանայում
Միջանկյալ արդյունքներ	• Հարկերի պատշաճ գանձում, • Համայնքապետարանի գույքի վերագնահատում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Գանձվող հողի և գույքի հարկերի չափաբաժին • Գույքի հետ գործարքների համապատասխանությունը «գույքի կառավարման ծրագրին»
Թիրախային արժեք(ներ)	• Համապատասխանեցնել գույքի հետ գործարքները «գույքի կառավարման ծրագրին» մինչև 2022թ.-ի ավարտը, • Գանձվող հարկերի չափաբաժինը հասցնել առնվազն 90%-ի մինչև 2024թ.-ի ավարտը:

11. Ակտիվ մշակութային և սպորտային կյանքի խթանում

Առնչվող	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը`
---------	--

խնդիր(ներ)	երիտասարդության ներգավմամբ, Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում:
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Առնվազն բավարար պայմաններ ունեցող և ջեռուցվող մշակութային տների առկայություն բոլոր բնակավայրերում:: • Քարաշեն, Խնածախ, և Վաղատուր բնակավայրերի մշակութային տների վերանորոգման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթում, • Քարաշեն, Խնածախ, և Վաղատուր բնակավայրերի մշակութային տների վերանորոգման աշխատանքների իրականացում, որը հնարավորություն կդարձնի շինությունների կիրառումը մշակութային միջոցառումների համար: • Բոլոր բնակավայրերի մշակութային տների ջեռուցման համակարգի հիմնում, • Մշակութային միջոցառումների և արտադպրոցական դասընթացների իրականացման համար մշակութային տների ջեռուցման ապահովում: Համայնքապետարանի կողմից կազմակերպված մշակութային միջոցառումների թվի աճ • Դպրցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատությունների հետ պայմանավորվածությունների ձեռք բերում մշակութային միջոցառումների անցկացման վերաբերյալ, • Տարեկան կտրվածքով մշակութային միջոցառումների օրակարգի կազմում և բնակչությանը դրանց մասին տեղեկացում: • Համայնքից դուրս գտնվող մշակութային հաստատությունների հետ համագործակցում համայնքի բնակավայրերում միջոցառումներ իրականացնելու համար: Արտադպրոցական մշակութային և սպորտային խմբակների քանակի և բազմազանության աճ • Ի թիվս ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի՝ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության իրականացում արտադպրոցական կրթության մասնագետների հարցով, • Նշված մասնագետների հետ պայմանագրերի կնքում Համայնքի երեխաների և երիտասարդների այցելություններ համայնքից դուրս գտնվող մշակութային օջախներ • Տրանսպորտային միջոցի տրամադրում, • Համայնքից դուրս գտնվող մշակութային

	միջոցառումների հետ պայմանավորվածությունների ձեռքբերում Նոր գրականությամբ համալրված գրադարաններ • Անհրաժեշտ գրականության վերաբերյալ խորհրդակցությունների անցկացում համայնքի կրթական հաստատությունների հետ, • Նոր գրականություն ձեռք բերելու համար ֆինանսական միջոցների ձեռքբերում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Համայնքապետարանի կազմակերպած մշակութային միջոցառումների թիվ, • Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ, • Համայնքում գործող մարզական խմբակների թիվ • Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով • Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով, • Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից, • Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից, • Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայնքից դուրս մշակութային օջախներ, • Նոր գրականությամբ համալրված գրադարանների թիվը • Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ՝ արտահայտված տոկոսով:
Թիրախային արժեք(ներ)	• Համայնքապետարանի կազմակերպած մշակութային միջոցառումների թվի աճ տարեկան առնվազն 10%-ով, • Համայնքում գործող մշակութային խմբակների թվի աճ տարեկան առնվազն 10%-ով, • Համայնքում գործող մարզական խմբակների թվի աճ տարեկան առնվազն 10%-ով, • Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի աճ տարեկան առնվազն 10%-ով, • Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի աճ տարեկան առնվազն 10%-ով, • Ծնողների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում) համայնքում գործող մշակութային և մարզական խմբակներից • Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված

	երեխաների ու պատանիների՝ համայնքից դուրս մշակութային օջախներ այցելությունների թվի աճ տարեկան առնվազն 10-ով, • Մինչև 2026թ-ը համայնքի բոլոր գրադարանների՝ նոր գրականությամբ համալրված լինելը • Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ առնվազն 10%-ով :
--	--

12. Բժշկական սպասարկման պայմանների բարելավում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքի բոլոր բնակավայրերի բժշկական սպասարկամ կենտրոններում առաջին անհրաժեշտության դեղորայքի առկայություն: • Համայնքի բժիշկների հետ խորհրդակցությունների անցկացում առաջին անհրաժեշտության պարագաների հստակեցման համար, • Դրամական աջակցության ցուցաբերում համայնքի բոլոր բժշկական կենտրոններին առաջին անհրաժեշտության դեղորայքով ապահովված լինելու համար Համայնքի կենտրոնական բուժհաստատության անձնակազմի պարբերաբար այցելությունների կատարում բոլոր բնակավայրերի դպրոցներ և նախակրթական հաստատություններ: • Համայնքի կենտրոնական բուժհաստատության հետ պայմանավորվածության ձեռքբերում՝ կրթական հաստատություններ կատարվող այցելությունների հետ կապված • Այցելությունների օրակարգի կազմում տարեկան կտրվածքով
Չափման ցուցանիշ(ներ)	• Ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության նվազում նախորդ տարվա համեմատ՝ արտահայտված տոկոսով • Համայնքային ենթակայության բուժական հիմնարկի կողմից այլ բուժական հիմնարկեր ուղղորդված այցելուների քանակի նվազում:
Թիրախային արժեք(ներ)	• Ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության նվազում նախորդ տարվա համեմատ առնվազն 5%-ով, • Մինչև 2021թ.-ը Համայնքային ենթակայության բուժական հիմնարկի կողմից այլ բուժական հիմնարկեր ուղղորդված այցելուների քանակի նվազում առնվազն 30%-ով:

13. Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքում կազմակերպվող միջոցառումների ավելի դյուրին լինելը հաշմանդամների համար - Համայնքի հասարակական, կրթական և մշակութային հաստատությունների շինություններում չափումների իրականացում՝ ստուգելու նրանց հասանելիության մակարդակը հաշմանդամների համար, - Հաշմանդամների համար ոչ հասանելի շինություններում շինարարական աշխատանքների միջոցով ձևափոխումների իրականացում
Չափման ցուցանիշ(ներ)	- Հաշմանդամների համար հասանելի կրթական, մշակութային և հասարակական վայրերի չափաբաժինը, - Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասակցել են հաշմանդամություն ունեցող անձիք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս) - Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ (որպես հաշմանդամություն ունեցող անձանց տոկոս)
Թիրախային արժեք(ներ)	- Մինչև 2022թ-ը Հաշմանդամների համար հասանելի կրթական, մշակութային և հասարակական վայրերի չափաբաժինը հասցնել 65%-ի, - Հաշմանդամների մասնակցություն ունեցող համայնքային միջոցառումների չափաժնի աճ տարեկան առնվազն 10%-ով: - Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց թվի աճ տարեկան առնվազն 10%-ով:

14. Աջակցությունը պետական պաշտպանության իրականացմանը

Առնչվող խնդիր(ներ)	Աջակցությունը պետական պաշտպանության իրականացմանը
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում Համայնքի բոլոր բնակավայրերում ապրող զինապարտների մասին տեղեկատվության պարբերաբար թարմացում: Աջակցություն կամավորակն ջոկատների հավաքագրման

	աշխատանքներին • Ջոկատի հավաքագրման վերաբերյալ հայտարարության տարածում:
Չափման ցուցանիշ(ներ)	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում
Թիրախային արժեք(ներ)	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում սկսած 2022թ.-ից

15. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում

Առնչվող խնդիր(ներ)	Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքի բնակավայրերում ապաստարանների առկայություն • Համայնքի բնակավայրերի ապաստարանների և թաքստոցների համար կիրառվող շինությունների կարգավիճակի հստակեցում, Համայնքում քաղաքացիական շտաբի առկայություն • Նոր քաղաքացիական պաշտպանության պլանի կազմում, որի շրջանակներում կհստակեցվեն քաղաքացիական պաշտպանության մարմինները Համայնքի ՔՊ մարմինների՝ քաղաքացիական պաշտպանության հմտությունների տիրապետում • Քաղաքացիական պաշտպանության հմտությունների բարձրացման ուղղված դասընթացների անցկացում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Համայնքի բնակավայրերում ապաստարանի կամ թաքստոցի առկայություն, • Համայնքում քաղաքացիական շտաբի առկայություն, • Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ՔՊ մարմինների հմտությունների մակարդակը:
Թիրախային արժեք(ներ)	• Մինչև 2022թ.-ի ավարտը քաղաքացիական պաշտպանության պլանի կազմում, որտեղ կհստակեցվեն համայնքի բնակավայրերի թաքստոցներն ու ապաստարանները, • Մինչև 2022թ.-ի ավարտը քաղաքացիական պաշտպանության շտաբի ստեղծում, • Մինչև 2022թ.-ի ավարտը քաղաքացիական պաշտպանության հմտությունների բարձր մակարդակի

	ապահովում:
--	------------

16. Երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում

Առնչվող խնդիր(ներ)	Երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Երիտասարդության խնդիրներին վերաբերող միջոցառումների քանակի աճ - Ակտիվ երիտասարդական թիմի ստեղծում, որը կբարձրաձայնի երիտասարդներին հետաքրքրող հարցեր, - Երիտասարդական թիմի նախաձեռնությամբ և համայնքապետարանի աջակցությամբ մշակութային միջոցառումների անցկացում: Համայնքի մշակութային տներում կինոդիտումների իրականացում - Կինոդիտման համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում, - Կինոդիտումների մասին հայտարարությունների տարածում:
Չափման ցուցանիշ(ներ)	Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ
Թիրախային արժեք(ներ)	Համայնքում իրականացվող միջոցառումների քանակի աճ տարեկան առնվազն 10%-ով:

17. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Բոլոր կարիքավուն ընտանիքների գրանցում և նրանց համար ֆինանսական օգնության հասանելիության ապահովում - Դժվարին սոցիալական պայմաններում գտնվող ընտանիքների տվյալների թարմացում, - Կարիքավոր ընտանիքների հասանելիք օգնության պատշաճ տրամադրում:
Չափման ցուցանիշ(ներ)	- Սոցիալական ծրագրի առկայություն, - Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը ծրագրից:
Թիրախային արժեք(ներ)	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում) իրականացվող ծրագրից:

18. Ծնելիության և բազմագավակության խթանում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքում ծնելիության և բազմագավակության խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքում ծնելիության մակարդակի բարձրացում Երեք և ավելի երեխա ունենալու դեպքում համայնքապետարանի կողմից դրամական պարգևի տրամադրում՝ 50000 ՀՀ Դրամ;
Չափման ցուցանիշ(ներ)	Համայնքում ծնելիության աճ նախորդ տարվա համեմատ,
Թիրախային արժեք(ներ)	Համայնքում ծնելիության աճ տարեկան առնվազն 8%-ով,

19. Բնապահպանության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի շրջակա միջավայրի պահպանություն
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքում շաբաթօրյակների իրականացում - Շաբաթօրյակների իրականացման գրաֆիկի կազմում և դրանց մասին բնակչությանը տեղեկացում Նոր տնկված ծառերի մոտ կաշոդականության բարձր ցուցանիշի ապահովում - Ծառատունկի ժամանակ իմունային սորթերի կիրառում - Հետերոաուքսին քիմիկատի օգտագործում
Չափման ցուցանիշ(ներ)	- Համայնքում կազմակերպված ծառատունքի ժամանակ տնկված ծառերի կաշոդականություն՝ արտահայտված տոկոսով - Համայնքի մաքրման շաբաթօրյակներ
Թիրախային արժեք(ներ)	- Առնվազն 90% կաշոդականության ապահովում նոր տնկված ծառերի մոտ, - Սկսած 2022թ.-ից կանոնավոր շաբաթօրյակների իրականացում համայնքի բոլոր բնակավայրերում:

20. Համայնքում իրականացվող ծրագրերում բարեգործության դերի մեծացում

Առնչվող խնդիր(ներ)	Բարեգործության խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված	Բարեգործական նպատակներով հանգանակված գումարի չափի աճ

գործողություններ	- Ֆինանսավորման անհրաժեշտություն ունեցող համայնքային ծրագրերի և դրանց կարևորության մասին տեղեկատվության տարածում, - Հավանական բարերարների հետ կապի հաստատում և նրանց խնդրի ներկայացում
Չափման ցուցանիշ(ներ)	Բարեգործական նպատակներով հանգանակված գումարի չափը,
Թիրախային արժեք(ներ)	Բարեգործության նպատակներով հանգանակված գումարի աճ տարեկան առնվազն 10%-ով:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Այս բաժնում ներկայացված է, թե վերը նշված ծրագրերն ինչ ֆինանսական միջոցներով են իրականացվելու:

1. Համայնքի բնակավայրերում նախակրթական և ուսուցման իրականացում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	495,000
	Ելակետային տարվա արժեք	70000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	495,000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Բարեգործություն/նվիրատվություն	65,000
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	430,000
	Այլ աղբյուրներ	8500
Ֆինանսավորման առկայությունը	Այս ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների մեծ մասի (351500 հազար ՀՀ դրամ) հարցը դեռևս լուծված չէ: Այս խնդիրը լուծելու համար համայնքապետարանը պատրաստվում է դիմել արտաքին պաշտոնական դրամաշնորհների և խնդիրը բարձրացնել բարեգործական միջոցառումների շրջանակներում: Մնացած 65,000 հազարը տրամադվելու է համայնքապետարանի հետ համագործակցող բարեգործների կողմից:	

2. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, աղբահանության իրականացում և գերեզմանատների հետ առնչվող խնդիրների կարգավորում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	247000
	Ելակետային տարվա արժեք	155000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	60000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	

	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	170000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	10000
	Այլ աղբյուրներ	7000
Ֆինանսավորման առկայությունը	143000 հազար ՀՀ դրամի համար ներկայացվել է ֆինանսավորման հայտ: Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 104000 հազար ՀՀ դրամ:	

3. Զբոսաշրջության խթանում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	55000
	Ելակետային տարվա արժեք	15000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	5000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	30000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	20000
	Այլ աղբյուրներ	7000
	Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 50000 հազար ՀՀ դրամ, որի նպատակով պատրաստվում է բանակցություններ վարել մասնավոր սեկտորի հետ և հայտ ներկայացնել պաշտոնական դրամաշնորհի ստանալու համար:	

4. Անասնապահության ոլորտում բարեփոխումների իրականացում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	80000
	Ելակետային տարվա արժեք	20000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	5000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	60000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	10000
	Այլ աղբյուրներ	10000
	Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 80000 հազար ՀՀ դրամ, որի նպատակով պատրաստվում է համագործակցել համայնքի մասնավոր սեկտորի հետ և հայտ ներկայացնել պաշտոնական դրամաշնորհի ստանալու համար:	

5. Համայնքի ճանապարհների բարեկարգում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	600000
	Ելակետային տարվա արժեք	100000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	50000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	100000

	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	400000
	Այլ աղբյուրներ	
Ֆինանսավորման աղբյուրությունը	Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 550000 հազար ՀՀ դրամ, որի նպատակով պատրաստվում է համագործակցել համայնքի մասնավոր սեկտորի հետ և հայտ ներկայացնել պաշտոնական դրամաշնորհի ստանալու համար:	

6. Համայնքի բնակավայրերում լուսավորության ցանցի ստեղծում և բարելավում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	150000
	Ելակետային տարվա արժեք	30000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	15000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	100000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	35000
	Այլ աղբյուրներ	
Ֆինանսավորման աղբյուրությունը	Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 1355000 հազար ՀՀ դրամ, որի նպատակով պատրաստվում է համագործակցել համայնքի մասնավոր սեկտորի հետ և հայտ ներկայացնել պաշտոնական դրամաշնորհի ստանալու համար:	

7. Ոռոգման և խմելու ջր ցանցերի կառուցում և բարենորոգում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	250000
	Ելակետային տարվա արժեք	70000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	25000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	100000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	125000
	Այլ աղբյուրներ	
Ֆինանսավորման աղբյուրությունը	Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 225000 հազար ՀՀ դրամ, որի նպատակով պատրաստվում է համագործակցել համայնքի մասնավոր սեկտորի հետ և հայտ ներկայացնել պաշտոնական դրամաշնորհի ստանալու համար:	

8. Գույքային և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	6500
	Ելակետային տարվա արժեք	2000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	6500
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	

	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	
	Այլ աղբյուրներ	
Ֆինանսավորման առկայությունը	Այս ծրագիրը համայնքապետարնն ամբողջությամբ իրականացնելու է սեփական միջոցներով:	

9. Ակտիվ մշակութային և սպորտային կյանքի խթանում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	800000
	Ելակետային տարվա արժեք	200000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	200000
	Բարեգործություն/նվիրատվություն	100000
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	500000
	Այլ աղբյուրներ	
Ֆինանսավորման առկայությունը	Ծրագրի իրականացումը պահանջում է զգալի դրամական միջոցներ, որը համայնքապետարանը պատրաստվում է հայթայթել բարեգործական նվիրատվությունների, արտաքին պաշտոնական դրամաշնորհների և մասնավոր սեկտորի հետ համագործակցության միջոցով:	

10. Բժշկական սպասարկման պայմանների բարելավում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	5000
	Ելակետային տարվա արժեք	1000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	5000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	
	Այլ աղբյուրներ	
Ֆինանսավորման առկայությունը	Այս ծրագիրը համայնքապետարնն ամբողջությամբ իրականացնելու է սեփական միջոցներով:	

